Հավելված
ՀՀ փոխվարչապետի 2020 թ.
սեպտեմբերի 30 -ի N 599 - Ա
որոշման

«ՀԱՄԱԿԱՐԳԻՉՆԵՐ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻՆ»
ԾՐԱԳԻՐ

1.	Ծրագրի նպատակը	Համակարգիչների տրամադրում Հայ Կրթական Հիմնարկության կողմից հովանավորվող, վճարովի համակարգում սովորող և համակարգչի կարիք ունեցող ուսանողներին:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Ակնկալվում է ծրագրի շրջանակներում օրենքով սահմանված կարգով օգտվել հարկային արտոնություններից:
3.	Բարեգործը	ԱՄՆ Հայ Կրթական Հիմնարկություն 600 West Broadway, Suite130, Glendale, CA 91204 (818)242-4154
4.	Ծրագրի կատարողը	Հայաստանի Հանրապետությունում Հայ Կրթական Հիմնարկության մասնաճյուղ, ՀՀ, ք. Երևան, Սայաթ Նովա 19, Անի Պլազա Հյուրանոց, Բիզնես հարկ, 2-րդ սենյակ, ՀՎՀՀ՝ 01542952) Հեռ. 011 53-14-85, 093 575 474
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Հայաստանի Հանրապետություն, բնագավառը՝ սոցիալական
6.	Ծրագրի բյուջեն	Բյուջեն՝ 90,944,000 դրամ
7.	Բարեգործություն ստացողը	Կազմակերպության կողմից հովանավորվող 320 անապահով ուսանող: Քանի որ աշխարհում տիրող նոր կորոնավիրուսային հիվանդությամբ պայմանավորված երկրում ուսուցումը անցել է առցանց և հիբրիդային եղանակի, ՀԿՀ տնօրենների խորհուրդը որոշում է կայացրել ուսանողների՝ հատկապես մարզերից եկած, տրամադրել դյուրակիր համակարգիչներ՝ ավելի

		հասանելի դարձնելու համար կրթությունը նրանց համար: Ուսանողների ընտրությունը կատարվել է հաշվի առնելով ուսանողների գնահատված կարիքը (ցուցակը կցվում է):
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	2020 թվականի սեպտեմբերի 30-ից մինչև հոկտեմբերի 30-ը
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	320 հատ դյուրակիր համակարգիչների ձեռքբերում՝ 90,944,000 դրամ արժողությամբ (Յուրաքանչյուրի գինը՝ 284,200 դրամ)
10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների և ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	320 հատ Dell Vostro Notebook 3591 10th Generation Intel Core i3-1005G1 Processor (4MB Cache, up to 3.4 GHz) Windows 10 Pro 64 մակնիշի դյուրակիր համակարգիչների ձեռքբերում՝ 90,944,000 դրամ արժողությամբ (Յուրաքանչյուրի գինը՝ 284,200 դրամ)
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում:
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, և այլ կազմակերպությունների հետ	Համագործակցություն չի նախատեսվում
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Արդյունավետության նկատմամբ վերահսկողությունն իրականացնելու է ԱՄՆ-ի Հայ Կրթական Հիմնարկության բարերարների խորհուրդը և ՀՀ-ում մասնաճյուղի տնօրինությունը, Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով կներկայացվեն տեղեկություններ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԱՎԻՆՅԱՆ